



2019 թվականի մարտի 29-ին «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում հանդիպումներ տեղի ունեցան Դիլիջան և Սևան համայնքերում: Հանդիպումների հիմանական նպատակը ֆոկլուս խմբային քննարկումների անցկացումն էր վերը նշված համայնքերի ՍԱՏԳ(Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն), ՏԻՄ աշխատակիցների, ինչպես նաև Սոցիալական աջակցության տարածքային գործակալությանը կից Աջակցող ցանցի անդամների հետ:

Ինչպես արդեն գիտենք, «Բազմաշահագրգիռ սոցիալական օաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացվող ֆոկլուս- խմբային քննարկումների բուն նպատակն է վեր հանել Սոցիալական աջակցության օրենքով վերը նշված կառույցներին վերապահված գործառույթների իրականացման մանրամասներն ու խնդիրները:

«Սոցիալական աջակցության տարածքային գործակալություն» ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների բարելավմանը, մշակելով բարելավման առաջարկություններ: Ծրագրի իրականացման աշխարհագրությունն է ՀՀ Լոռու (Ալավերդի), Տավուշի (Դիլիջան), Գեղարքունիքի (Սևան) և Կոտայքի (Հրազդան) մարզերը:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից «Իրավաբանների հայկական ասոցացիա» ՀԿ ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում:

«Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:

